«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՀՐԱՄԱՆ № 22 S7 15 05 2024թ.

ՀՀ. ք. Իջևան 4001 Ուսանողական

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ԱՕ 5-րդ, 158-162-րդ հոդվածների և ՀՀ կառավարության 11.08.2005 թիվ 1599-Ն ու 1384-Ն որոշումների պահանջները և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտո14.05.2024 թ. № 91/45 - Լ հրամանը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) կանոնադրության 32-րդ կետի 15-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ աշխատողների 2024 թվականի ամենամյա արձակուրդի տրամադրման հետևյալ ժամանակացույցը.

ա) ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական (ներառյալ ամբիոնների վարիչներին) աշխատողներին տրամադրել 35 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2024թ. հուլիսի 11-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ (30 աշխատանքային օր) և 2025թ. հունվարի 3-ից մինչև հունվարի 9- ը ներառյալ (5 աշխատանքային օր) ընկած ժամանակահատվածում,

բ) ԵՊՀ ԻՄ տնօրենին, փոխտնօրենին և ԵՊՀ ԻՄ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին (ներառյալ՝ բաժնի վարիչներին) տրամադրել 25 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2024թ. հուլիսի 18-ից մինչև օգոստոսի 21-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

գ) ԵՊՀ ԻՄ գրադարանի և արխիվի աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ և 5 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա լրացուցիչ արձակուրդ՝ 2024թ. հուլիսի 18-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում,

դ) ԵՊՀ ԻՄ մյուս աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 2024թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում սահմանված ժամանակացույցից տարբերվող այլ ժամկետներում աշխատողներին ամենամյա արձակուրդ (կամ դրամի մասը) կարող է տրամադրվել միայն ԵՊՀ ԻՄ տնօրենի հրամանով:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ ԻՄ աշխատողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ**